



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԷ
Ս. ԿԱՐԱՊԵՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ
ԵՒ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ 25-ԱՄԵԱԿԻՆ

Կիրակի, Դեկտեմբեր 2-ին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ Ս. Պատարագի արարողութեան եւ պիտի փոխանցէ Հայ Ժողովուրդի Առաջին Լուսաւորիչներուն՝ Ս. Թադէոս եւ Ս. Բարթողոմէոս Առաքեալներու տօնին պատգամը:

Ս. Պատարագը պիտի մատուցէ եկեղեցւոյ հոգևոր հովիւ՝ Արժ. Ս. Վիգէն Ա. Զինյ. Վասիլեան:

Հոգեհանգստեան արարողութենէն ետք, եկեղեցւոյ շրջափակին մէջ, օրհնութիւնը եւ բացումը պիտի կատարուի խաչքար յուշակոթողի, ձեռամբ Առաջնորդ Սրբազան Հօր:

Աւելի ուշ, կ.ե. ժամը 4-ին, յատուկ հանդիսութեամբ մը պիտի նշուի եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցի 25-ամեակը, եկեղեցւոյ «Կարապետեան» սրահին մէջ:

Ձեռնարկը կը վայելէ Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւնն ու ներկայութիւնը, եւ կազմակերպուած է եկեղեցւոյ հովիւին, հոգաբարձութեան եւ Կիրակնօրեայ դպրոցին կողմէ: Նախագահութիւնը ստանձնած են Տէր եւ Տիկին Արթուր եւ Արմինէ Արթենեան:

Պիտի իրագործուի գեղարուեստական յայտագիր, որուն իրենց մասնակցութիւնը պիտի բերեն եկեղեցւոյ կիրակնօրեայ վարժարանի աշակերտները:

PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT ST. GARABED
CHURCH AND THE 25TH ANNIVERSARY
OF THE SUNDAY SCHOOL

On Sunday, December 2nd, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy and deliver the sermon on the feast of the Apostles Sts. Thaddeus and Bartholomew at St. Garabed Church in Hollywood. Archpriest Fr. Vicken Vassilian will celebrate Liturgy.

After requiem services the Prelate will conduct the blessing and official opening of the memorial cross-stone in the church courtyard.

Later in the day, the 25th anniversary of the church's Sunday School will be celebrated at "Karapetian" Hall. The Prelate will attend and preside over the

celebration which has been organized by the parish Pastor, Board of Trustees, and Sunday School. Mr. and Mrs. Artur and Armine Artenyan are the sponsors of the event which will feature performances by Sunday School students.

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԱՆԺԱՄԱՆՅԵԼԻ ՊԱՏՎԱՄԸ ՅՈՒՇՈՂ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Խրիմեան Հայրիկի վախճանման 100րդ տարեդարձին նուիրուած հանդիսութիւնը, կազմակերպուած՝ Ազգ. Առաջնորդարանի Առաքելութեան Տարածման յանձնախումբին կողմէ, տեղի ունեցաւ Երեքշաբթի, 27 Նոյեմբեր 2007ի երեկոյեան ժամը 7:30ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ու ներկայութեամբ Կրօնական ժողովի, Ազգային Վարչութեան, ծխական շրջաններու ժողովականութեան



ներկայացուցիչներուն, ինչպէս նաեւ աւելի քան 500 հայորդիներու:

Հաւաքական աղօթքէ ետք, հանդիսավարը՝ Տիկին Թամար Սերայտարեան, բացման իր խօսքին մէջ վեր առաւ Աստուծոյ հաւատացեալ ծառայ ու մեր Չարթօնքին առաջատար մէկ ռահվիրան ըլլալու Խրիմեան Հայրիկի արժանիքները: Ան ձեռնհասօրէն վարեց յայտագիրը, Հայրիկին մասին նշանաւոր գրողներէ մէջբերումներով համեմելով իր խօսքն ու ներկայացումը:

Բանախօսն էր Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան:



Իբրեւ հիմք օգտագործելով Խրիմեան Հայրիկի կեանքին ու գործունեութեան իրերայաջորդ հանգրուանները, Հայր Սուրբը ներկայացուց Մկրտիչ Խրիմեանի կեանքին ու բազմակողմանի գործունեութեան ուրուագիծը, սկսելով անոր մանկութենէն, հասնելու համար Էջմիածնայ Ս. Աթոռի գահակալութեան հանգրուանները, վաստակ մը յատկանշուած՝ եկեղեցւոյ, ժողովուրդին ծառայութեամբ ու հայութեան իրաւունքներուն հետեւողական հետապնդումով, թէ՛ Օսմանեան եւ թէ՛ Ցարական կայսրութեանց դէմ: Հայր Սուրբը անդրադարձաւ նաեւ Խրիմեան Հայրիկի գրական ժառանգութեան

ու մեծ դաստիարակ մը ըլլալու անոր հանգամանքին:

Հանդիսութեան եզրափակիչ խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազան Հայրը, որ նախ գահատանքով արտայայտուեցաւ օրուան

բանախօսին, գեղարուեստական բաժնի մասնակիցներուն եւ կազմակերպողներուն մասին:

Խօսելով այս ձեռնարկին շարժառիթին ու նպատակին մասին, Առաջնորդ Սրբազանը վեր առաւ Խրիմեան Հայրիկին կոթողական դէմք մը ըլլալու արժանիքները եւ ընդգծեց, որ զայն աւելի լաւ ճանչնալով, մենք աւելի կը սիրենք զԱստուած, որովհետեւ ան Աստուծոյ ծառայութիւնը կենսաւորած էր ժողովուրդին ու անոր իրաւունքներուն պաշտպանութեան իր նուիրումով: Ան ընդգծեց, որ Հայրիկին վախճանման 100ամեակը առիթ է վերանորոգելու անոր պատգամով մարմնաւորուած ուխտը, ընկրկումներ չունենալ մարտահրաւերներու դիմաց, գնահատել եկեղեցական ու ազգային մեր սրբութիւնները եւ ներողամտութեան ճամբով ծառայել եկեղեցւոյ ու ժողովուրդին, Խրիմեանի ճամբով սիրել զԱստուած ու անոր կեանքի օրինակը որդեգրել իբրեւ ուղեցոյց: «Վստահ եմ որ անոր հոգին այս պահուս այս տաճարին մէջ կը սաւառնի. տարեք զայն ձեզի հետ ու առաջնորդուեցէք անոր օրինակով», եզրափակեց Առաջնորդ Սրբազանը:

Հանդիսութիւնը վերջ գտաւ Առաջնորդ Սրբազանին «Պահպանիչ»ով ու «Կիլիկիա»ի խմբերգումով:

CELEBRATING THE LIFE AND TIMELESS MESSAGE OF KHRIMIAN HAYRIG

On the evening of Tuesday, November 27th, the Western Prelacy commemorated the 100th anniversary of the passing of Khrimian Hayrig with a lecture held under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and organized by the Prelacy Outreach Committee. Over 500 faithful, including Religious and Executive Council members and representatives of Prelacy parishes had gathered inside St. Mary's Church to hear Christian Education Department Co-Director Very Rev. Fr. Barthev Gulumian speak on the life and timeless messages of Khrimian Hayrig. Participating in the artistic program with songs were Hermine Amirian, Misak Kayserian, and Armine Derderian on the organ.



The evening began with the Lord's Prayer followed by welcoming remarks by emcee Mrs. Tamar Seraydarian. V. Rev. Fr. Barthev spoke of Khrimian Hayrig's life, achievements and the legacy of his preaching, teachings, and struggle for justice and the rights of our Armenian people.

V. Rev. Fr. Barthev then focused on the patriotic activities of Khrimian Hayrig, reminding the listeners that his life was in essence a struggle; a struggle against the oppressive regimes of tsarist Russia and the Ottoman Empire, as well as against adversaries.

Closing remarks were delivered by the Prelate who first commended the participants and the organizers of the event and continued by saying that by knowing Khrimian Hayrig more closely we can

become closer to God for it was his devotion to God that drove him to faithfully serve his people and to defend their rights. The Prelate concluded by saying that on this 100th anniversary of the passing of Khrimian Hayrig now is the time for us all to be renewed spiritually by his enduring messages. We must not shy away from challenges, dutifully serve our church and people, and live our lives guided by the ideal he set for us. The program concluded with the Prelate's benediction and "Giligia".

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՆԵՐԿԱՅ ԵՂԱՒ ԴԱԹԵԱՆ-ՄԱՐԻԱՄԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԶԵՆՆԱՐԿԻՆ

Երեքշաբթի, Նոյեմբեր 27-ի երեկոյեան, Կլենտէյլի «Անուշ» ճաշարանին մէջ տեղի ունեցաւ գնահատանքի ճաշկերոյթ մը, կազմակերպութեամբ Դաւթեան Մարիամեան Կրթական Հաստատութեան:

Իբրեւ «Տարուան կրթական գործի» մեծարանքի արժանացաւ վաստակաշատ դաստիարակ Տիար Գաբրիէլ Ինճեճիկեան, որուն անձն ու գործունեութիւնը ներկայացուց իրաւաբան Նիկոլ Մանուկեան: Առաջնորդ Սրբազան Հայրը անձամբ ներկայ եղաւ երեկոյթին, կատարեց բացման աղօթքն ու տուաւ իր պատգամը: Առաջնորդ Սրբազան Հօր կ'ընկերանար Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Արտակ Զինյ. Տեմիրճեան: Ներկայ էին նաեւ պետական ու կրթական մարզերու պատասխանատուներ: Ելոյթ ունեցողները ընդհանրապէս անդրադարձան մայրենի լեզուի եւ հայ մշակոյթի ուսուցման կարեւորութեան, գնահատելով Դաւթեան Մարիամեան Կրթական հաստատութեան կողմէ անելի քան 1000 հայ աշակերտներու տրամադրուած մշակութային ծառայութեան:


PRELATE ATTENDS APPRECIATION NIGHT OF DAVIDIAN MARIAMIAN EDUCATIONAL FOUNDATION

On the evening of Tuesday, November 27th, the Davidian Mariamian Educational Foundation had organized an appreciation night which took place at Anoush Restaurant in Glendale. This year Mr. Gabriel Injeikian was honored as "Educator of the Year"; Mr. Nigol Manoukian introduced the honoree.

The invocation and remarks were offered by the Prelate, who was accompanied by St. Mary's pastor Rev. Ardag Demirjian. Also present were assemblymen and community representatives and educators.

Remarks centered on the importance of the services of the foundation to over a thousand students by providing Armenian language and culture instruction.

**ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ
ՉՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ՝
ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆԻ
«ՄԵՏՐՈՊԱՎԵԴ»Ը**



Ուրբաթ, 30 Նոյեմբերին, լոյս տեսաւ բազմավաստակ բանաստեղծ ժագ Ս. Յակոբեանի նորագոյն հատորը՝ «Մետրոպավեպ», հրատարակութիւն՝ Արեւմտեան մեր Թեմի Ազգային Առաջնորդարանի:

128 էջերէ բաղկացած հատորը գործնական ընդառաջում մըն է Հայ Լեզուի Տարուան առիթով Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հրաւերին, ու կը բացուի այս առիթով տրուած հայրապետական Սրբատառ կոնդակով: Կ'ընդգրկէ մեր ոսկեղնիկին ու անոր գիւտարարին՝ Մետրոպ Մաշտոցի նուիրուած բանաստեղծութիւններու շարք մը: Ողջոյնի խօսք ունի Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան: Բանաստեղծութիւնները կը ներկայանան չորս ենթաբաժանումներու մէջ: Հատորին մեկենասութիւնը յանձն առած է Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինը:

Ի մօտոյ տեղի պիտի ունենայ ողջունահանդէս: Ստանալու համար, կարելի է դիմել Ազգային Առաջնորդարան:

**WESTERN PRELACY PUBLISHES “MESROBAVEB”
BY JACQUES HAGOPIAN**

The latest book by renowned poet Jacques Hagopian, “Mesrobaveb”, was published by the Western Prelacy on Friday, November 30. The book was published in acknowledgment of the Pontifical declaration of 2007 as the Year of the Armenian Language by H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia.

The preface is comprised of the Pontifical Encyclical of His Holiness and includes remarks by H.E. Archbishop Moushegh Mardirossian. The book itself encompasses four sections of poems in honor of St. Mesrob Mashdots and the Armenian language. A presentation of the book, which has been sponsored by the Prelacy Ladies Auxiliary, is anticipated in the near future. Please contact the Western Prelacy for ordering information.